Արձանագրություն թիվ 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

04 փետրվարի 2015թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքումյան

Ներկա էին խորհրդի բոլոր 11 անդամները:

Օրակարգ

1. 2014-15թթ. ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակների քննարկում և հաստատում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2014-2015թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակեպման նախապատրաստական աշխատանքների քննարկում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակներն ըստ կուրսերի և մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, III կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով՝ համաձայն ուսումնական պլանների և անհատական ծանրաբեռնվածության: Փոփոխություններ կատարվել են <<Նյութերի տեխնոլոգիա-2>> /32ժ./ և <<Նյութերի տեխնոլոգիա-4>> /32ժ./ մոդուլները ամբողջությամբ կդասավանդի Լ.Ֆլջյանը և <<Կոմպոզիցիա-6>> /64ժ./ դասավանդումը կիրականացնի Գ.Ջավրուշյանը `կապված երկրորդ կիսամյակում նրա թերբեռնվածության հետ, իսկ <<Ինտերիեր, էքստերիեր>> մոդուլի դասավանդումը՝ ամբիոնի վարիչի ժ/պ Մ.Մելքումյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - <<Գծանկարի, գունանկարի և քանդակի>> ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց ներկայացնել տնօրինությանը հաստատելու 2014-15թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2014-15թթ.ուստարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը ներկայացնել տնօրենության քննարկմանն ու հաստատմանը:

Օրակարգի երկորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային հարցերի վերաբերյալ հանձնարարականներով: Նա մասնավորապես նշեց, որ յուրաքնչյուր դասախոս պետք է պատրաստի դասավանդվող առարկաներից ևս մեկ առարկայական փաթեթ՝ ցուցաբերելով ավելի բարձր պրոֆեսիոնալիզմ և ակտիվ օգտագործել դասավանդման ժամանակակից մեթոդներ ՝ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Վերոնշյալ գործընթացի իրականանացման վերահսկողությունը դնել ֆակուլտետի դեկանի և քարտուղարի վրա:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ռ.Մելքումյան